ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ ԿԱՐԵՆԻ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АЙРАПЕТЯН АРШАК КАРЕНОВИЧ

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ДЕЯТЕЛЬНОСТИ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА В ДЕЛЕ УСТАНОВЛЕНИЯ МИРА И СТАБИЛЬНОСТИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 “Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление”

Ереван – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Գ. Ղազինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան

իրավաբանական գիտությունների թեկնածու Գ. Գ. Թորոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 20-ին, ժամը 14^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի մայիսի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук, доцент А. Г. Казинян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор Г. Б. Даниелян

кандидат юридических наук Г. Г. Торосян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 20-ого июня 2014г. в 14^{00} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 20 мая 2014г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент В.Д. Аветисян

To achieve the research goals the following objectives have been put forward:

- Study the process of the EU CFSP formulation, its aims and the legaltools of its implementation in the light of the EU legal and contractual system,
- Examine the EU CSDP as an EU security component explaining the legal basis of the latter's formulation,
- Identify the structure of agencies of the EU CFSP and its scope of authority taking into account the structural changes being carried out under the Lisbon Treaty and the legal status of newly-emerged actors,
- Refer to the issue of the EU legal subjectivity and the types of agreements signed in the result of the EU legal subjectivity by considering them as legal basis of the EU cooperation with third countries,
- Study the formats and legal basis of cooperation between the EU and South Caucasian countries by assuming there is an opportunity for further development and deepening of cooperation,
- Examine the legal aspects of conflicts in the South Caucasus by defining the current international legal status of Abkhazia, South Osetia and the Republic of Nagorno-Karabakh (Mountainous Karabakh), as well as to identify the similarities and specific features of conflicts through application of legal and comparative analysis,
- Comprehensively study the legal basis of the EU activity in the resolution of conflicts in the South Caucasus by referring to the tools and inititatives of conflict resolution by the EU, as well as to legal issues of its potential involvement.

To achieve the research goals andobjectivesthe following methodological tools of scientific research have been applied: both general ones, such us dialectic, logical, historic, critical, analytical, generalizing, andinterdisplinary ones, such as formal-logical, historic and legal, practical, legal analysis, system-formingand legal and comparative ones.

The framework of studied issues coupled with theses being presented for the public defense of the PHD reflect the scientific novelty of the research. For the first time in the Armenian jurisprudence, an attempt has been made to systematically study the legal basis of the EU activity in establishment of peace and stability in the South Caucasus given the strucutural changes carried outunder the Lisbon Treaty and the implementation of the EU foreign and security policy.

The thesis has been prepared in the Chair of European and International Law of the Faculty of Law, Yerevan State University. The main theses of the study have been discussed and reviewed during the Chair sessions. Also, these theses have duly been presented by the author in a number of scientific articles.

The structure of the thesis is based on the goals and objectives of the research. It is composed of the introduction, three chapters which overall include seven subchapters, conclusion and the bibliography. The thesis is being developed according to criteria defined by the RA Higher Qualification Committee (HQC).

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում անվտանգությունը միջազգային խաղաղության և կայունության ապահովման հիմնական միջոցն է: Մեր օրերում անվտանգությունը՝ բացի ռազմաքաղաքական խնդիրներից, ներառում է տնտեսական, բնապահպանական և մարդու իրավունքներին վերաբերվող հիմնահարցեր: Հանրահայտ է՝ միջազգային հանրությունը պատմության ընթացքում բազում փորձեր է կատարել համընդհանուր անվտանգության ապահովման համակարգեր ձևավորելու ուղղությամբ՝ բախվելով բազմաթիվ հակասությունների և խոչընդոտների: Սակայն անցած դարի կեսերից ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակն այլընտրանք չթողեց և պարարտ հող նախապատրաստեց միջազգային անվտանգության համակարգ ձևավորելու համար: Իբրև արդյունք ձևավորվեց փոխգործակցող միջպետական հարաբերությունների և միջազգային կազմակերպությունների համալիր, որը քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, ռազմական և հասարակական միջոցառումների և ջանքերի միջոցով նպատակ ունի ապահովել պետությունների և ժողովուրդների հավաքական անվտանգությունը: Միջազգային անվտանգության համակարգը հիմնված է միջազգային իրավահարաբերություններով ձեռք բերված պայմանավորվածությունների վրա, որոնք կազմում են անվտանգության հիմնարար սկզբունքների, միջպետական մեխանիզմների և կառուցակարգերի, միջազգային իրավական նորմերի, բազմակողմ պայմանագրերի և այլ տարրերի համակցություն: Միջազգային անվտանգության համակարգը ընդունված է դիտարկել համընդհանուր և տարածաշրջանային հարթություններում: Համընդհանուր միջազգային անվտանգությունը միջազգային իրավահարաբերությունների ամբողջություն է, որը ապահովում է միջազգային իրավունքի սուբյեկտների և ընդհանուր առմամբ միջազգային հանրության կենսագործունեությունը, համագործակցությունը և փոխգործակցությունն անվտանգության ոլորտում: Միջազգային անվտանգության համակարգի կարևորագույն դերակատար է Միավորված ազգերի կազմակերպությունը (այսուհետև՝ ՄԱԿ), որի կանոնադրությունը նախատեսում է համապատասխան իրավական հիմքեր միջազգային խաղաղության ապահովման տարածաշրջանային համակարգեր ձևավորելու համար: Տարածաշրջանային անվտանգությունը, լինելով միջազգային անվտանգության բաղկացուցիչ մաս, որոշակի տարածաշրջանում գտնվող պետությունների անվտանգությունն ապահովելու համաձայնեցված միջոցների համալիր է: Տարածաշրջանային անվտանգության համակարգերից առավել զարգացածը համաեվրոպական անվտանգության համակարգն է, որի առանցքն են այնպիսի միջազգային դերակատարներ, ինչպիսիք են Եվրոպական միությունը (այսուհետև՝ ԵՄ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (այսուհետև՝ ԵԱՀԿ) և Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունը (այսուհետև՝ ՆԱՏՕ):

Համաեվրոպական անվտանգության համակարգի շրջանակներում իրավական տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ԵՄ-ն որպես տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման գործիք դիտարկելը: Մասնավորապես, կարևոր են միջազգային անվտանգության ապահովման ոլորտում ԵՄ պատասխանատվության սահմանների ուրվագծումը և տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերի ուսումնասիրությունը: Ատենախոսության թեմայի արդիականությունը հատկապես արժևորվում է ԵՄ Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (այսուհետև՝ ԸԱԱՔ) ոլորտում Լիսաբոնի պայմանագրով իրականացված արմատական փոփոխությունների լույսի ներքո, քանի որ դրանք նոր իրավապայմանագրային հիմք ստեղծեցին ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականությունն իրականացնելու համար: Հաշվի առնելով Հարավային Կովկասի պետությունների և ԵՄ-ի միջև տարիների ընթացքում ձևավորված համագործակցության բարձր մակարդակը՝ մեծապես կարևոր է Հարավային Կովկասում խաղաղություն և կայունություն ապահովելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերի ուսումնասիրությունը: Այս համատեքստում իրավական տեսանկյունից արդիական է Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորման՝ ԵՄ գործունեությունն առավել ընկալելի դարձնելը: Միևնույն ժամանակ փոխադարձ հետաքրքրություն է ներկայացնում Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտների համակողմանի ուսումնասիրությունը: Վերջինս կարևոր է, քանի որ կարող է առանցքային և գործնական կարևոր նշանակություն ունենալ հակամարտություններն արդյունավետ կարգավորելու համար:

Հարավային Կովկասում խաղաղություն և կայունություն ապահովելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերի համակողմանի ուսումնասիրությունը և դրանք ճիշտ ըմբռնելն առանձնապես կարևոր են Հայաստանի Հանրապետության համար՝ հաշվի առնելով արտաքին քաղաքականության եվրոպական ուղղության առանցքային բնույթը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու՝ ԵՄ հնարավոր ներգրավվածության իրավական հիմնահարցերի շրջանակը: Բացի այդ, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև տարածաշրջանի մյուս պետությունների, ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման հեռանկարի առկայությամբ և առավել սերտ համագործակցություն ստեղծելու ձգտումով:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը: Ատենախոսության շրջանակներում քննարկվող խնդիրները հայ իրավագիտության մեջ մինչ այժմ համակարգային վերլուծության գրեթե չեն ենթարկվել: Հեղինակներն ուսումնասիրել են միայն որոշակի խնդիրներ և առանձին հարցեր, որոնք կարևոր տեսական հիմք են ապահովում ատենախոսության համար: Մասնավորապես այդպիսի ուսունասիրություններ են իրականացրել հայ գիտնականներ Ա. Ղազինյանը, Ա. Սարգսյանը, Ա. Հարությունյանը, Վ. Քոչարյանը, Ե. Կիրակոսյան, Շ. Ավագյա-

ARSHAK KAREN HAYRAPETYAN

LEGAL BASIS OF THE ACTIVITY OF THE EUROPEAN UNION IN THE ESTABLISHMENT OF PEACE AND STABILITY IN THE SOUTH CAUCASUS

SUMMARY

The thesisis aimed at the identification and study of legal basis of the activity of the European Union in the establishment of peace and stability in the South Caucasus.

In the framework of pan-european security system, from the legal viewpoint, the consideration of the EU as a tool for provision of regional peace and stability is of special interest.In particular, delineationof the EU borders of responsibility in the field of provision of international security and the study of the EU legal basis in establishment of peace and stability in the region is of key importance.The topic of the PHD research is especially actual in the light of fundamental reforms in the EU Common Foreign and Security Policy (hereinafter CFSP) being implemented under the Lisbon Treaty, as these reforms established a new legal and contractual basis for the implementation of the EU foreign and security policy.Considering the high level of cooperation between the countries in South Caucasus and the EU established during recent years the study of the legal basis of the EU activity in the establishment of peace and stability in the South Caucasus is of special importance.Within this context, from the legal viewpoint, the enhancement ofperception of the EU activities in the resolution of conflicts in the South Caucasus becomes quiteactual.At the same time, the comprehensive study of legal aspects of conflicts in the South Caucasus presents a mutual interest as it might be pivotal and have important practical significance to effectively handle the conflicts.

Object of the research study is the legal basis of the EU in establishment of peace and stability in the South Caucaus and the subject is the process of formulation of the EU CFSP, its goals and the legal tools of its implementation, legal basis of Common Security and Defense Policy (hereinafter CSDP) formulation, structure and authority of the EU CFSP agencies, issue of the EU legal subjectivity, the types of international agreements being signed in the result of international legal subjectivity of the EU, formats of cooperation between the EU and countries in the South Caucasus and their legal basis, legal aspects of conflcts in the South Caucasus as well as legal basis of the EU activity in resolution of conflcts in the South Caucasus.

The main goal of the thesis is to identify, through comprehensive study and analysis, the legal basis of the EU activity in the South Caucasus in establishment of peace and stability taken into consideration the existentacademicpublications and policy documents, the legal framework of cooperation between the EU and countries in the South Caucasus, as well as, from the legal viewpoint, to highlight the importance of making the EU foreign and security policy more predictable and understandable.

структуры и полномочий системы органов ОВПБ ЕС, с учетом осуществленных Лиссабонским договором структурных изменений и правового положения новоявленных фигурантов; обращение к вопросу правосубъектности ЕС и к заключенным в результате международной правосубъектности ЕС видам международных соглашений, рассматривая их в качестве правовых основ взаимодействия ЕС с третьими странами; изучение формата взаимодействия ЕС и государств Южного Кавказа и их правовых основ, имея ввиду, возможность углубления и развития дальнейшего сотрудничества; исследование правовых аспектов конфликтов Южного Кавказа, с определением нынешного международно-правового положения Абхазии, Южной Осетии и Нагорно-Карабахской Республики (НКР), а также выявление с применением сравнительно-правового анализа схожести и особенностей конфликтов; комплексное изучение правовых основ деятельности ЕС в деле урегулировния конфликтов на Южном Кавказе, с обращением особого внимания на средства и инициативы ЕС по урегулированию конфликтов на Южном Кавказе, а также на правовые проблемы возможного его вовлечения в них.

Методологической основой достижения цели научного исследования и выдвинутих задач диссертации явились как общие: диалектический, логический, исторический, критический, аналитический, обобщающий, так и частные: межпредметный, формально-логический, историко-правовой, логически-правовой, практический, аналитико-правовой, системно-структурной и сравнительно-правовой методы.

Научная новизна диссертации выражается в круге рассматриваемых вопросов и представленных к публичной защите положениях. Впервые в армянской правовой науке делается попытка подвергнуть систематизированному изучению правовых основ деятельности ЕС в деле обеспечения мира и стабильности на Южном Кавказе, с учетом выполненных в соответствии с Лиссабонским договором структурных изменений и осуществляемой ЕС внешней политикой и политикой безопасности.

Диссертация подготовлена на кафедре европейского и международного права юридического факультета Ереванского государственного университета (ЕГУ), на заседаниях которого были обсуждены и рецензированы основные положения диссертации. Основные положения диссертации отражены в нескольких опубликованних автором научных статьях.

Структура диссертации обусловлена целью и задачами исследования. Диссертация состоит из введения, трех глав, включенных в них семи параграфов, заключения и перечня использованной литературы и первоисточников. Диссертация изложена в соответствии с установленными стандартами Высшей аттестационной комиссии Республики Армения (ВАК РА).

նը, Տ. Բալայանը, Ռ. Կիրակոսյանը, ինչպես նաև մի շարք արտասահմանյան գիտնականներ:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է համակողմանի ուսումնասիրությամբ և վերլուծությամբ վեր հանել Հարավային Կովկասում խաղաղություն և կայունություն ապահովելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերը՝ հաշվի առնելով առկա տեսական և նորմատիվ նյութերը, Հարավային Կովկասի պետությունների և ԵՄ համագործակցության իրավական ձևաչափը և իրավական տեսանկյունից ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականությունն առավել կանխատեսելի և ընկալելի դարձնելու կարևորությունը:

Ատենախոսության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել ԵՄ ԸԱԱՔ ձևավորելու գործընթացը, նպատակները և դրանք իրականացնելու իրավական միջոցները ԵՄ իրավապայմանագրային համակարգի լույսի ներքո,
2. դիտարկել Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականությունը (այսուհետև՝ ԸԱՊՔ) որպես ԵՄ անվտանգության բաղադրիչ՝ պարզաբանելով վերջինիս ձևավորման իրավական հիմքերը,
3. բացահայտել ԵՄ ԸԱԱՔ մարմինների համակարգի կառուցվածքը և լիազորությունների շրջանակը՝ հաշվի առնելով Լիսաբոնի պայմանագրով իրականացված կառուցվածքային փոփոխությունները և երևան եկած նոր դերակատարների իրավական կարգավիճակը,
4. անդրադառնալ ԵՄ իրավասուբյեկտությանը և ԵՄ միջազգային իրավասուբյեկտության արդյունքում կնքվող միջազգային համաձայնագրերի տեսակներին՝ դիտարկելով դրանք որպես երրորդ պետությունների հետ ԵՄ համագործակցության իրավական հիմքեր,
5. ուսումնասիրել ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների համագործակցության ձևաչափերը և դրանց իրավական հիմքերը՝ նկատի առնելով հետագա համագործակցությունը զարգացնելու և խորացնելու հնարավորությունը,
6. հետազոտել Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտները՝ սահմանելով Աբխազիայի, Հարավային Օսիայի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (այսուհետև՝ ԼՂՀ) ներկայիս միջազգային իրավական կարգավիճակը, ինչպես նաև իրավահամեմատական վերլուծությամբ բացահայտել հակամարտությունների նմանությունները և առանձնահատկությունները,
7. բազմակողմանի ուսումնասիրել ԵՄ գործունեության իրավական հիմքերը Հարավային Կովկասի հակամարտությունները կարգավորելու գործում՝ անդրադառնալով Հարավային Կովկասում ԵՄ՝ հակամարտությունները կարգավորելու միջոցներին և նախաձեռնություններին, ինչպես նաև հնարավոր ներգրավվածության իրավական հիմնահարցերին:

Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտը Հարավային Կովկասում խաղաղություն և կայունություն ապահովելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերն են, իսկ առարկան՝ ԵՄ ԸԱԱՔ ձևավորելու գործընթացը, նպատակները և դրանք իրականացնելու իրավական միջոցները, ԸԱՊՔ ձևավորելու իրավական հիմքերը, ԵՄ ԸԱԱՔ մարմինների համակարգի կառուցվածքը և լիազորությունները, ԵՄ իրավասուբյեկտությունը, ԵՄ միջազգային իրավասուբյեկտության արդյունքում կնքվող միջազգային համաձայնագրերի տեսակները, ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների համագործակցության ձևաչափերը և դրանց իրավական հիմքերը, Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտները, ինչպես նաև Հարավային Կովկասի հակամարտությունները կարգավորելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերը:

Ատենախոսության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքը ԵՄ իրավունքի ոլորտին վերաբերող արտասահմանյան հեղինակների աշխատությունները, մենագրությունները և գիտական հոդվածներն են: Ատենախոսությունը գրելիս ուսումնասիրվել և որպես հիմք են ընդունվել գիտական շրջանակներում ճանաչում վայելող այնպիսի հեղինակների աշխատություններ, ինչպիսիք են Նիկու Պոպեսկուն, Պիետ էկուտը, Սայմոն Դյուքը, Պանոս Կուտրակոսը, էրիկ Սթայնը, Լիֆ Ռումրիխը, Հենրիի դե Վելը, Յու. Ս. Կաշկինը, Թիմ Պոտիերը, Դով Լինչը, Բրունո Կոպիտերսը, Մարկո Սիդդին, Սթեֆան Վոլֆը, էմմա Ջ. Ստյուարտը, Ռամզես Ա. Վեզելը, Ֆ. Ռոյ Ուիլիսը, Դերեկ է. Միքսը, Դոմինիկ Հանֆը, Մայքլ Գեիլերը, Հերվիգ Ս. Հ. Հոֆմանը, Ալեքսանդր Հ. Թըրքը, Պոլ Ջ. Գ. Կեպթեյնը, Սթեֆան Հենզելը, Ալլեն Ջ. Սենսը, Սվանթի է. Կորնելը, Քեթրին Գեգոութը, Պոլ Պ. Քրեյգը, Գրեյն դե Բրքան, Ալինա Կաչերովսկայան, Յոան Քոլզը, Մ. Տ. Ֆլորինսկին և այլք: Ատենախոսության տեսական հիմքն են նաև հայ գիտնականներ Ա. Ղազինյանի, Ա. Սարգսյանի, Ա. Հարությունյանի, Վ. Քոչարյանի, Ե. Կիրակոսյանի, Շ. Ավագյանի, Տ. Բալայանի, Ռ. Կիրակոսյանի և այլոց աշխատությունները:

Ատենախոսության նորմատիվ հիմքը: Ատենախոսության նորմատիվ հիմքն են 1945թ. ՄԱԿ-ի կանոնադրությունը, 1947թ. Դյունքերքի, 1948թ. Բրյուսելի, 1952թ. Եվրոպական պաշտպանական ընկերակցության հիմնադրման մասին, 1957թ. Եվրոպական տնտեսական ընկերակցության հիմնադրման մասին (կոչվում է նաև Հռոմի պայմանագիր) պայմանագրերը, 1986թ. Եվրոպական միասնական ակտը, 1992թ. ԵՄ-ի մասին (կոչվում է նաև Մաաստրիխտի պայմանագիր), 1997թ. Ամստերդամի, 2001թ. Նիցցայի պայմանագրերը, 2003թ. Եվրոպական անվտանգության ռազմավարությունը, 2007թ. ԵՄ-ի և ԵՄ-ի գործունեության մասին պայմանագրերը (վերջին երկուսն ամբողջությամբ կոչվում են նաև Լիսաբոնի պայմանագիր), ինչպես նաև ԵՄ ինստիտուտների ընդունած իրավական ակտերը և երրորդ պետությունների հետ հարաբերություններում ԵՄ կնքած միջազգային համաձայնագրերը: Ատենախոսության նորմատիվ հիմքում ընկած են նաև Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորմանը և Աբխազիայի,

АЙРАПЕТЯН АРШАК КАРЕНОВИЧ

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ДЕЯТЕЛЬНОСТИ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА В ДЕЛЕ УСТАНОВЛЕНИЯ МИРА И СТАБИЛЬНОСТИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена выявлению и изучению правовых основ деятельности Европейского Союза (далее-ЕС) в деле обеспечения мира и стабильности на Южном Кавказе.

Особый интерес с правовой точки зрения в рамках общевропейской системы безопасности представляет рассмотрение ЕС в качестве инструмента обеспечения регионального мира и стабильности. В частности, в изучении правовых основ деятельности ЕС важно определение границ ответственности ЕС в области обеспечения международной безопасности и в деле обеспечения регионального мира и стабильности. Актуальность исследования повышается в особенности в свете осуществленных Лиссабонским договором коренных изменений в сфере Общей внешней политики и политики безопасности (далее-ОВПБ) ЕС, поскольку они создали новые договорно-правовые основы для осуществления внешней политики и политики безопасности ЕС. Учитывая сформированный в течении последних лет высокий уровень сотрудничества между государствами Южного Кавказа и ЕС, особенно важным является изучение правовых основ деятельности ЕС в деле обеспечения мира и стабильности на Южном Кавказе. В данном контексте актуальным является восприятие деятельности ЕС в деле урегулирования конфликтов на Южном Кавказе с правовой точки зрения. В то же время взаимный интерес представляет всестороннее изучение правовых аспектов конфликтов на Южном Кавказе, так как это может иметь важное практическое значение для результативного урегулирования конфликтов.

Основной целью диссертации является выявление посредством комплексного изучения и анализа правовых основ деятельности ЕС в деле обеспечения мира и стабильности на Южном Кавказе, с учетом существующих теоретических и нормативных материалов, правового формата сотрудничества ЕС и государств Южного Кавказа и важности с правовой точки зрения максимальной предсказуемости и восприимчивости внешней политики и политики безопасности ЕС.

Для достижения цели диссертации были предложены следующие задачи: изучение процесса формирования и целей ОВПБ ЕС, правовых средств их осуществления в свете договорно-правовой системы ЕС; рассмотрение Общей политики безопасности и обороны как составной части безопасности ЕС, с разъяснением правовых основ формирования последней; выявление

ռաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելը դուրս է ԵՄ ուշադրությունից: Ավելին, վերջին տարիներին բավական աճել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում ԵՄ դերակատարություն ունենալու ցանկությունը: ԵՄ-ն Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու վերաբերյալ ունի սեփական մոտեցումներ, որոնց շրջանակում էլ իրականացնում է իր սահմանափակ գործունեությունը և ուրվագծում հետագայում այն ընդլայնելու հնարավորությունները: ԵՄ-ն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը հիմնականում առնչվում է երկու գործիքի՝ ԵՀՔ և Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ Հատուկ ներկայացուցչի միջոցով: ԵՄ-ն գործնականում չի իրականացնում հակամարտությունը կարգավորելուն ուղղված ծրագրեր և չի մասնակցում միջնորդական գործընթացին: ԵՄ-ն լիարժեք աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին՝ ընդգծելով ձևաչափի կարևորությունը: Նման անուղղակի ներգրավվածությունն անվերապահորեն ԵՄ-ի կողմից իրականացվող քաղաքականության հետևանք է, քանի որ իրավական տեսանկյունից ԵՄ-ն ունի առավել ակտիվ գործունեություն իրականացնելու բոլոր անհրաժեշտ հնարավորությունները՝ զգալի ներդրում ունենալով հակամարտության հետագա կարգավորման գործում:

Ատենախոսության հիմնական դրույթները բավարար չափով արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Եվրոպական միության և Հարավային Կովկասի պետությունների համագործակցության իրավական հիմքերը, «Պետություն և իրավունք», Երևան, 2012, 4(58), էջ 118-126:
2. Վրաց-օսական հակամարտության իրավական ասպեկտները, «Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր», Երևան, 2013, 1(18), էջ 111-118:
3. Եվրոպական միության գործունեության իրավական հիմքերը Վրաստանում հակամարտությունների կարգավորման գործում, «Հայ-Ռուսական (Սլավ.) համալսարանի լրաբեր», Երևան, 2013, 2(15), էջ 11-18:
4. Եվրոպական միության Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության իրավապայմանագրային համակարգը տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2012, 138.6, էջ 52-59:
5. Վրաց-աբխազական հակամարտության իրավական տեսանկյունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2013, 3, էջ 77-82:

Հարավային Օսիայի և ԼՂՀ իրավական կարգավիճակին առնչվող մի շարք իրավական ակտեր:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության նպատակին հասնելու և առաջադրված խնդիրները հետազոտելու համար մեթոդաբանական հիմք են գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, քննադատական, վերլուծական, ընդհանրացման, այնպես էլ մասնավոր՝ միջառարկայական, ձևական-տրամաբանական, պատմաիրավական, տրամաբանական-իրավական, գործառական, իրավական վերլուծության, համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է դիտարկվող հարցերի շրջանակում և հրապարակային պաշտպանության ներկայացվող դրույթներում: Հայ իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել համակարգված ուսումնասիրության ենթարկել Հարավային Կովկասում խաղաղություն և կայունություն ապահովելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերը՝ հաշվի առնելով Լիսաբոնի պայմանագրով իրականացված կառուցվածքային փոփոխությունները և ԵՄ-ի կողմից իրականացվող արտաքին և անվտանգության քաղաքականությունը: Այս համատեքստում ուսումնասիրության առարկա են դարձել ԵՄ ԸԱԱՔ ձևավորելու գործընթացը, նպատակները և դրանք իրականացնելու իրավական միջոցները, ԸԱՊՔ ձևավորելու իրավական հիմքերը, ԵՄ ԸԱԱՔ մարմինների համակարգի կառուցվածքը և լիազորությունները, ԵՄ իրավասուբյեկտությունը, ԵՄ միջազգային իրավասուբյեկտության արդյունքում կնքվող միջազգային համաձայնագրերի տեսակները, ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների համագործակցության ձևաչափերը և դրանց իրավական հիմքերը: Հատկապես առանձնակի ուշադրություն է դարձվել Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտներին, ինչպես նաև Հարավային Կովկասի հակամարտությունները կարգավորելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերի ուսումնասիրությանը: Հատկանշական է այն, որ ուսումնասիրության առարկա հարցերի շրջանակը Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ է համակարգված ուսումնասիրության ենթարկվում ատենախոսության մակարդակով:

Ատենախոսության գիտական նորույթն իր արտահայտումն է գտնում հրապարակային պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթներում.

1. ԵՄ-ի կողմից ԸԱՊՔ շրջանակներում իրականացվող առաքելությունները տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու հիմնական գործիքներն են: Գործնականում գոյություն ունի առաքելություններ հիմնադրելու երկու ընթացակարգ. մեկը՝ ՄԱԿ-ի մանդատի հիման վրա, իսկ մյուսը՝ ընդունող պետության համաձայնությամբ: Առաջինի դեպքում իրավական հիմք է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած համապատասխան բանաձևը, իսկ

երկրորդի դեպքում՝ պետության կողմից ԵՄ-ին ուղարկված պաշտոնական հրավերը:

2. Լիսաբոնի պայմանագրով ԵՄ իրավասուբյեկտության ամրագրումը և ցանկացած քաղաքականության ոլորտում միջազգային համաձայնագրեր կնքելու իրավասությունն անվերապահորեն կիրառելի է ԸԱԱՔ ոլորտում: Ավելին, ԸԱԱՔ ոլորտում ԵՄ կնքած միջազգային համաձայնագրերը պարտադիր են ԵՄ ինստիտուտների և անդամ պետությունների համար: ԵՄ անդամ պետությունների՝ արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտներում միջազգային համաձայնագրեր կնքելու և միակողմանի որոշումներ ընդունելու ինքնիշխան իրավունքը սահմանափակված է միայն ԵՄ-ի հանդեպ ունեցած իրավական պարտավորությունների շրջանակով:

3. Լիսաբոնի պայմանագիրն ուժի մեջ մտնելով նախատեսեց գործնականում ԵՄ-ի կողմից բացարձակապես նոր միջազգային համաձայնագրի տեսակի՝ հատուկ համաձայնագրերի կնքման իրավական հիմք: Ներկայումս ԵՄ-ի կողմից հատուկ համաձայնագրեր դեռևս չեն կնքվել, հետևաբար անորոշ է դրանց կարգավորման առարկան, ինչպես նաև տեղը ԵՄ-ի կողմից կնքվող միջազգային համաձայնագրերի դասակարգման մեջ: Այնուհանդերձ ԵՄ-ի մասին պայմանագրի 8-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում սահմանելու հատուկ համաձայնագրերին բնորոշ հատկանիշները: Դրանք են՝ հարևան պետությունների հետ արտոնյալ հարաբերություններ զարգացնելու նպատակը, ԵՄ արժեքների և սերտ համագործակցության վրա հիմնված լինելը, փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև համատեղ գործողություններ նախատեսելը: Հետևաբար կարելի է ենթադրել, որ հատուկ համաձայնագրերը գործնականում կլինեն փոխկապակցման համաձայնագրերի այլընտրանքային տարբերակ՝ նոր իրավաքաղաքական հնարավորություն ընձեռելով ԵՄ-ին՝ զարգացնելու հարաբերությունները հարևան պետությունների հետ:

4. Ակնհայտորեն կարելի է տարբերակել ԵՄ և երրորդ պետությունների համագործակցության ուղղակի և անուղղակի իրավական հիմքեր: Տարբերակման հիմնական չափորոշիչներ են իրավական հիմքերի ուղղակի առնչությունը համագործակցությանը և համագործակցության կողմերի համար իրավունքներ և պարտականություններ առաջացնելը: Ուղղակի իրավական հիմք են ԵՄ-ի կողմից կնքվող և երկկողմ հարաբերությունները կարգավորող միջազգային համաձայնագրերը, իսկ անուղղակի իրավական հիմք՝ ԵՄ իրավապայմանագրային համակարգի այն դրույթները, որոնցով ԵՄ իրավասու է դառնում կնքելու անհրաժեշտ համաձայնագրեր:

5. Հարավային Կովկասի հակամարտությունները, չնայած որոշակի ընդհանրությունների, տարբերվում են Անդրկովկասում անկախ ազգային պետություններ ստեղծելու ժամանակաշրջանում ունեցած իրավական կարգավիճակով, իրրեդենտ բնույթով, իրավական հիմնահարցերի շրջանակով, ներկայիս միջազգային իրավական կարգավիճակով, միջազգային դերակատարների ներգ-

ճակի բնորոշ հատկանիշներ են դե ֆակտո անկախությունը, չճանաչված լինելը (չի ճանաչվել ՄԱԿ-ի անդամ և ոչ մի պետության կողմից) և իր հավակնած տարածքի մեծ մասն ինքնուրույն վերահսկելը (ԼՂՀ չի վերահսկում Շահումյանի շրջանն ամբողջությամբ, ինչպես նաև Մարտունիի և Մարտակերտի շրջանների արևելյան հատվածները):

9. 2008թ. փետրվարի 17-ին Կոսովոյի խորհրդարանի կողմից երկրամասի անկախության հռչակումը և դրա անմիջապես ճանաչումն աշխարհի առաջատար պետությունների կողմից միջազգային իրավունքի ասպարեզում ստեղծեցին նոր նախադեպ, որը կարող է կարևոր նշանակություն ունենալ այլ հակամարտություններ կարգավորելու համար: Կոսովոյի նախադեպն ապացուցեց, որ միջազգային հանրությունը կարող է ճանաչել պետության անկախությունն առանց նախկին մետրոպոլիայի համաձայնության, որից անջատվում է տվյալ պետությունը: Հարավային Կովկասի և Կոսովոյի հակամարտությունների միջև պատմաիրավական և իրավաքաղաքական զուգահեռներ անցկացնելը և հակամարտությունների անհատական հատկանիշների ընդհանրությունները և առանձնահատկությունները սահմանելը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ Հարավային Կովկասի հակամարտությունները, մասնավորապես իրավական ասպեկտների շրջանակով, լիովին համադրելի են Կոսովոյի հակամարտությանը, իսկ առկա տարբերությունները որոշիչ չեն կարող լինել Կոսովոյի նախադեպի հնարավոր կիրառման պարագայում:

10. Մինչ 2008թ. օգոստոսյան պատերազմը ԵՄ գործունեությունը Վրաստանում հակամարտությունները կարգավորելու գործում բավական պասիվ բնույթի էր: ԵՄ-ն երկրորդական դերակատար էր և ուղղակիորեն ներգրավված չէր հակամարտությունները կարգավորելու գործընթացում: ԵՄ-ն գործադրած ջանքերով հիմնականում փորձում էր ստեղծել անհրաժեշտ պայմաններ և երկարատև կայունության մթնոլորտ՝ հակամարտությունները խաղաղ կարգավորելու համար: 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո ԵՄ գործունեությունը, սկսած կողմերի միջև հրադադար կնքելուց, էապես ակտիվացավ: Ներկայումս ԵՄ գործունեության առանցքը կազմում են Վրաստանում ԵՄ դիտորդական առաքելությունը (ԵՄ խորհրդի որոշում 2013/446/CFSP), Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ Հատուկ ներկայացուցիչը (ԵՄ խորհրդի որոշում 2013/353/CFSP), ինչպես նաև Ժնևի քննարկումներում ԵՄ միջազգային միջնորդի կարգավիճակը: ԵՄ գործունեության իրավական հիմքեր են ԵՄ իրավապայմանագրային համակարգի դրույթների հիման վրա ԵՄ խորհրդի ընդունած որոշումները (համատեղ գործողությունները), ինչպես նաև կողմերի միջև կնքված միջազգային համաձայնագրերը: ԵՄ-ն միակ միջազգային դերակատարն է Վրաստանում, որը միաժամանակ իրականացնում է հակամարտությունը կանխելու և կարգավորելու գործառույթներ:

11. ԵՄ-ն, ի տարբերություն վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտությունների, գործնականում ուղղակիորեն ներգրավված չէ Լեռնային Ղա-

յան: Հայաստանի պարագայում իրատեսական է, որ ԵՄ կընտրի հատուկ համաձայնագրի տեսակը, որն ունի բոլոր անհրաժեշտ հատկանիշները դառնալու նոր ուղղակի իրավական հիմք՝ կողմերի համագործակցությունն ամրապնդելու և խորացնելու համար: Հնարավոր է նաև, որ ԵՄ որպես այընտրանք հատուկ համաձայնագիր կնքի Ադրբեջանի հետ, եթե վերջինս դադարեցնի կամ չարձանագրի առաջընթաց փոխկապակցման համաձայնագիր կնքելու շուրջ բանակցություններում:

7. Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտների ուսումնասիրությունը, հիմնվելով իրավահամեմատական և հակամարտությունների ընթացքի փաստագրական վերլուծության վրա, հնարավորություն է ընձեռում սահմանելու հակամարտությունների բնույթը, անհատական հատկանիշները, նմանությունները և առանձնահատկությունները: Նաև հստակորեն ընդգծելու հակամարտության կողմերը և հակամարտության առարկան, ինչպես նաև ներկայացնելու Աբխազիայի, Հարավային Օսիայի և Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի փոփոխությունների հիմքերը և դրանց օրինականությունը: Հարավային Կովկասի հակամարտությունները հիմնականում նման են էթնոքաղաքական և ազգային ազատագրական բնույթով, ինչպես նաև ունեն մոտ ժամանակագրություն: Հակամարտությունները տարբերվում են Անդրկովկասում անկախ ազգային պետություններ ստեղծելու ժամանակաշրջանում ունեցած իրավական կարգավիճակով, իրրեդենտ բնույթով, իրավական հիմնահարցերի շրջանակով, ներկայիս միջազգային իրավական կարգավիճակով, միջազգային դերակատարների ներգրավվածությամբ, լուծման նախապատվություններով և կարգավորման ձևաչափերով: Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտներն առանցքային և գործնական կարևոր նշանակություն ունեն հակամարտություններն արդյունավետ կարգավորելու համար և արդիական են դրանց առնչվող ցանկացած հիմնահարցի ուսումնասիրության շրջանակներում: Ավելին, հակամարտությունների կարգավորման գործում ներգրավված միջազգային դերակատարները պետք է ցուցաբերեն տարբերակված մոտեցում՝ հաշվի առնելով հակամարտությունների բոլոր անհատական հատկանիշները:

8. Աբխազիայի, Հարավային Օսիայի և ԼՂՀ ներկայիս միջազգային իրավական կարգավիճակը հակամարտությունները կարգավորելու առանցքային գործոն է: 2008թ. օգոստոսյան պատերազմը՝ որպես իրավական հետևանք, հանգեցրեց Աբխազիայի և Հարավային Օսիայի միջազգային իրավական կարգավիճակի փոփոխության: Աբխազիայի և Հարավային Օսիայի ներկայիս միջազգային իրավական կարգավիճակի բնորոշ հատկանիշներ են դե ֆակտո անկախությունը, մասամբ ճանաչված լինելը (չհանդիսանալով ՄԱԿ-ի անդամ՝ ճանաչվել են մի քանի ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից), ինչպես նաև իրենց հավակնած ամբողջ տարածքը ինքնուրույն վերահսկելը: 1994թ. բիշքեկյան արձանագրությունը ստորագրելու պահից մինչ օրս ԼՂՀ միջազգային իրավական կարգավիճակը մնացել է անփոփոխ: ԼՂՀ ներկայիս միջազգային իրավական կարգավի-

րավվածությամբ, լուծման նախապատվություններով և կարգավորման ձևաչափերով: Աբխազիայի, Հարավային Օսիայի և ԼՂՀ ներկայիս միջազգային իրավական կարգավիճակի բնորոշ հատկանիշներն իրենց ամբողջության մեջ հակամարտությունները կարգավորելու առանցքային գործոն են:

6. Հարավային Կովկասի և Կոսովոյի հակամարտությունների միջև պատմաիրավական և իրավաքաղաքական զուգահեռները և հակամարտությունների անհատական հատկանիշների ընդհանրությունները և առանձնահատկությունները սահմանելը հնարավորություն են ընձեռում փաստելու, որ Հարավային Կովկասի հակամարտությունները, մասնավորապես իրավական ասպեկտների շրջանակով, լիովին համադրելի են Կոսովոյի հակամարտությանը, իսկ առկա տարբերությունները որոշիչ չեն կարող լինել Կոսովոյի նախադեպի հնարավոր կիրառման պարագայում:

7. Վրաստանում առկա հակամարտությունները կարգավորելու՝ ԵՄ գործունեությունը կրում է ուղղակի բնույթ և բաղկացած է հակամարտությունը կանխելու և կարգավորելու գործառույթներից: ԵՄ գործունեության իրավական հիմքեր են ԵՄ իրավապայմանագրային համակարգի դրույթների հիման վրա ԵՄ խորհրդի ընդունած որոշումները (համատեղ գործողությունները), ինչպես նաև կողմերի միջև կնքված միջազգային համաձայնագրերը: Ի տարբերություն Վրաստանում առկա հակամարտությունների, ԵՄ-ն ուղղակիորեն ներգրավված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում: Նման անուղղակի ներգրավվածությունն անվերապահորեն ԵՄ-ի կողմից իրականացվող քաղաքականության հետևանք է, քանի որ իրավական տեսանկյունից ԵՄ-ն ունի առավել ակտիվ գործունեություն իրականացնելու բոլոր անհրաժեշտ հնարավորությունները:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունն արտահայտվում է Հարավային Կովկասում խաղաղություն և կայունություն ապահովելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերի ուսումնասիրության արդյունքում կատարված ընդհանրացումներում և եզրահանգումներում, որոնք զարգացնում են ուսումնասիրության առարկայի վերաբերյալ առկա տեսական միտքը: Ատենախոսության տեսական նշանակությունը նաև այն է, որ աշխատանքը Հարավային Կովկասում խաղաղություն և կայունություն ապահովելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերին վերաբերող համալիր ուսումնասիրություն է, որի արդյունքները կարող են հիմք ծառայել այս բնագավառում հետագա ուսումնասիրություններ իրականացնելու համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ թեմայի ուսումնասիրության արդյունքում ձևավորված հիմնական դրույթները և եզրահանգումները կարող են օգտագործվել գիտահետազոտական, իրավաստեղծ, իրավակիրառ և ուսումնադաստիարակչական գործունեության մեջ: Բացի այդ ուսումնասիրության արդյունքում կատարված վերլուծությունները և համապատասխան առաջարկությունները կարող

են գործնական կարևոր նշանակություն ունենալ Հարավային Կովկասի հակամարտությունները արդյունավետ կարգավորելու համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում, որի նիստերի ժամանակ քննարկվել և գրախոսվել են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած մի շարք գիտական հոդվածներում, ինչպես նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի նիստերի ժամանակ ատենախոսի կարդացած զեկուցումներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է ուսումնասիրության նպատակով և խնդիրներով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, դրանցում ընդգրկված յոթ պարագրաֆից, եզրակացությունից ու օգտագործված գրականության և սկզբնաղբյուրների ցանկից: Ատենախոսությունը շարադրված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված չափորոշիչների համաձայն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել է թեմայի գիտական մշակվածության աստիճանը, ատենախոսության նպատակը և խնդիրները, ուսումնասիրման օբյեկտը և առարկան, ատենախոսության տեսական, նորմատիվ և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և կառուցվածքը:

Առաջին գլուխը («Եվրոպական միության Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության իրավապայմանագրային համակարգը տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու համատեքստում») բաղկացած է երեք պարագրաֆից և նվիրված է ԵՄ ԸԱԱՔ ձևավորելու գործընթացի, նպատակների և դրանք իրականացնելու իրավական միջոցների, ԵՄ ԸԱՊՔ ձևավորելու իրավական հիմքերի, ինչպես նաև ԵՄ ԸԱԱՔ մարմինների համակարգի կառուցվածքի և լիազորությունների վերհանմանը և ուսումնասիրմանը:

Առաջին պարագրաֆում («Եվրոպական միության Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն ձևավորելու գործընթացը, նպատակները և դրանք իրականացնելու իրավական միջոցները») ԵՄ իրավապայմանագրային համակարգի լույսի ներքո իրականացվում է ԵՄ ԸԱԱՔ ձևավորելու գործընթացի, նպատակների և դրանք իրականացնելու իրավական միջոցների ուսումնասիրություն: Ներկայացվում է ԵՄ ԸԱԱՔ ձևավորելու գործընթացը փուլ առ փուլ՝

ուժի մեջ մտնելով նախատեսեց գործնականում ԵՄ-ի կողմից բացարձակապես նոր միջազգային համաձայնագրի տեսակի՝ հատուկ համաձայնագրեր կնքելու իրավական հիմք: Հատուկ համաձայնագրերի իրագործումը գործնականում պետք է պարբերական խորհրդակցությունների առարկա լինի: Ներկայումս ԵՄ-ի կողմից հատուկ համաձայնագրեր դեռևս չեն կնքվել, հետևաբար անորոշ է դրանց կարգավորման առարկան, ինչպես նաև տեղը ԵՄ-ի կողմից կնքվող միջազգային համաձայնագրերի դասակարգման մեջ: Այնուհանդերձ, ԵՄ-ի մասին պայմանագրի 8-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում սահմանելու հատուկ համաձայնագրերին բնորոշ հատկանիշները: Դրանք են՝ հարևան պետությունների հետ արտոնյալ հարաբերություններ զարգացնելու նպատակը, ԵՄ արժեքների և սերտ համագործակցության վրա հիմնված լինելը և փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև համատեղ գործողություններ նախատեսելը: Հատուկ համաձայնագիր կարող է կնքվել Թուրքիայի հետ լիարժեք անդամակցության համաձայնագրի փոխարեն, ինչպես նաև ԵՄ արևելյան հարևանների հետ՝ որպես փոխկապակցման համաձայնագրի այլընտրանքային տարբերակ: Հնարավոր է նաև հատուկ համաձայնագրերի կնքում ԵՄ այնպիսի հարևանների հետ, ինչպիսիք են Ռուսաստանը, Շվեյցարիան կամ գաճաճ պետությունները, որոնք ուղղակիորեն հետաքրքրված չեն փոխկապակցման համաձայնագրերի կնքմամբ: Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ հատուկ համաձայնագրերը գործնականում փոխկապակցման համաձայնագրերի այլընտրանքային տարբերակ կլինեն՝ ԵՄ-ին տալով հարևան պետությունների հետ հարաբերությունները զարգացնելու նոր իրավաքաղաքական հնարավորություն:

6. ԵՄ և երրորդ պետությունների համագործակցությունն ուսումնասիրելիս ակնհայտորեն կարելի է տարբերակել համագործակցության ուղղակի և անուղղակի իրավական հիմքեր: Տարբերակման հիմնական չափորոշիչներ են իրավական հիմքերի ուղղակի առնչությունը համագործակցությանը և համագործակցության կողմերի համար իրավունքներ և պարտականություններ առաջացնելը: Ուղղակի իրավական հիմք են ԵՄ-ի կողմից կնքվող և երկկողմ հարաբերությունները կարգավորող միջազգային համաձայնագրերը, իսկ անուղղակի իրավական հիմք՝ ԵՄ իրավապայմանագրային համակարգի այն դրույթները, որոնք ԵՄ-ին օժտում են անհրաժեշտ համաձայնագրեր կնքելու իրավասությամբ: Հարավային Կովկասի պետությունների դեպքում մինչ օրս համագործակցության ուղղակի իրավական հիմք են կողմերի միջև դեռևս 1996թ. կնքված ԳՀՀ-ները: Հաշվի առնելով ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների հարաբերությունները կարգավորելու իրավական ձևաչափերին առնչվող վերջին զարգացումները, մասնավորապես, ԵՄ և Վրաստանի փոխկապակցման համաձայնագրի նախաստորագրումը, ԵՄ և Հայաստանի ընդունած համատեղ հայտարարության դրույթները և Ադրբեջանի հետ փոխկապակցման համաձայնագիր կնքելու շուրջ բանակցությունները շարունակելը՝ կարելի է եզրակացնել, որ դրանք մոտ ապագայում կհանգեցնեն կողմերի համագործակցության իրավական հիմքերի փոփոխութ-

յին իրավահարաբերությունների մեջ էին մտնում տարբեր իրավական ձևաչափերով: Խնդիրը հիմնականում այն էր, որ Եվրոպական ընկերակցությունը, ի տարբերություն մյուս երկու հենասյուների, օժտված էր իրավաբանական անձի կարգավիճակով: Ստեղծված իրավիճակը հանգեցրել էր բացառիկ արտաքին իրավասության և համատեղ արտաքին իրավասության տեսակների ձևավորման: Առաջինը ենթադրում էր այնպիսի միջազգային համաձայանգրերի կնքում, որոնց առարկան լիովին գտնվում էր Եվրոպական ընկերակցության իրավասության ոլորտում, իսկ երկրորդի դեպքում միջազգային համաձայնագրի առարկան ինչպես Եվրոպական ընկերակցության, այնպես էլ ԵՄ անդամ պետությունների իրավասության ոլորտում էր: Լիսաբոնի պայմանագիրը, ԵՄ-ին օժտելով իրավաբանական անձի կարգավիճակով և փոխարինելով Եվրոպական ընկերակցությունն իրավաբանորեն նոր ԵՄ-ով, դե յուրե ամրագրեց ԵՄ իրավասուբյեկտությունը: ԵՄ-ն ձեռք բերեց իրավասություն՝ ցանկացած քաղաքականության ոլորտում կնքելու միջազգային համաձայնագրեր՝ հանդես գալով ԵՄ անդամ բոլոր պետությունների անունից: Լիսաբոնի պայմանագրով ԵՄ իրավասուբյեկտության ամրագրումը և ցանկացած քաղաքականության ոլորտում միջազգային համաձայնագրեր կնքելու իրավասությունն անվերապահորեն կիրառելի է ԸԱԱՔ ոլորտում: Ավելին, ԸԱԱՔ ոլորտում ԵՄ-ի կողմից կնքված միջազգային համաձայնագրերը պարտադիր են ԵՄ ինստիտուտների և անդամ պետությունների համար: ԵՄ անդամ պետությունների միջազգային համաձայնագրեր կնքելու և արտաքին ու անվտանգության քաղաքականության ոլորտներում միակողմանի որոշումներ ընդունելու ինքնիշխան իրավունքը սահմանափակված է միայն ԵՄ-ի հանդեպ ունեցած իրավական պարտավորությունների մասով: Լիսաբոնի պայմանագրով ԵՄ իրավասուբյեկտության ամրագրումը և ԸԱԱՔ ոլորտում միջազգային համաձայնագրեր կնքելու իրավասությունը գործնականում մեծացնում են ԵՄ ազդեցությունը միջազգային ասպարեզում և հնարավորություն ընձեռում միջազգային դերակատարների հետ հանդես գալու հավասար հարթությունում:

5. ԵՄ-ն ԸԱԱՔ դրույթները կիրառելու նպատակով կնքում է միջազգային համաձայնագրեր մեկ կամ մեկից ավելի պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ: ԵՄ-ի կողմից երրորդ պետությունների հետ կնքվող միջազգային համաձայնագրերը կողմերի միջև համագործակցություն կառուցելու իրավական հիմք են՝ սահմանելով համատեղ նպատակներից բխող փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ: ԵՄ-ի կողմից կնքվող միջազգային համաձայնագրերի տեսակի ընտրությունը պայմանավորված է որոշակի պետությունների և տարածաշրջանների նկատմամբ ԵՄ հետաքրքրություններով և նպատակներով: ԵՄ-ի կողմից կնքվող միջազգային համաձայնագրերի տեսակներ են առևտրային, գործընկերության և համագործակցության, փոխկապակցման (ասոցացման), ինչպես նաև անդամակցության համաձայնագրերը: Վերը նշված դասակարգման հերթականությունն արտացոլում է երրորդ պետությունների հետ ԵՄ համագործակցությունը խորացնելու աստիճանը: Լիսաբոնի պայմանագիրն

Եվրոպայում արտաքին և անվտանգության քաղաքականության շրջանակներում առաջին համագործակցությունից մինչ ԵՄ ԸԱԱՔ ձևավորումը: Մասնավորապես, ուսումնասիրվում են ԸԱԱՔ ձևավորելու գործընթացի ժամանակ ընդունված իրավական փաստաթղթերը, որոնք հիմք են ծառայել Եվրոպայում արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում համագործակցությունը զարգացնելուն և խորացնելուն: Մոտ կես դար տևած ձևավորման գործընթացի հանգուցալուծումը 1992թ. ԵՄ-ի մասին պայմանագիրն էր, որը համախմբեց եվրոպական արտաքին և անվտանգության քաղաքականության բոլոր ոլորտները և այդ ոլորտներում առկա համագործակցության պրակտիկան, ինչպես նաև ամրագրեց ԸԱԱՔ-ի վերաբերյալ իրավական դրույթներ՝ սահմանելով ԸԱԱՔ նպատակները և դրանք իրականացնելու իրավական միջոցները: Ատենախոսությունում ԸԱԱՔ նպատակների համակարգված դիտարկումը հնարավորություն է ընձեռում հիմնավորել այն, որ դրանք ԸԱԱՔ հիմնարար սկզբունքներն են: ԸԱԱՔ նպատակների շարքում հատկանշական է խաղաղությունը պահպանելու և միջազգային անվտանգությունն ամրապնդելու դրույթը, որն ինքնին հիմնավորում է ԵՄ տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովող լիարժեք դերակատարի կարգավիճակը: Լիսաբոնի պայմանագրով իրականացված փոփոխությունների լույսի ներքո առանձին-առանձին վեր հանվել և ուսումնասիրվել են ԸԱԱՔ նպատակներն իրականացնելու իրավական միջոցների տեսակները: Արդյունքում հիմնավորվել է այն դրույթը, որ ԸԱԱՔ նպատակներն իրականացնելու իրավական միջոցները կազմում են գործիքների ամբողջական համակարգ, որը կարևոր կենսական նշանակություն ունի ԵՄ-ի համար և երաշխավորում է ԵՄ արդյունավետ դերակատարությունը միջազգային ասպարեզում:

Երկրորդ պարագրաֆում («Եվրոպական միության Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականություն ձևավորելու իրավական հիմքերը») ուսումնասիրվում է ԸԱՊՔ-ն որպես ԵՄ անվտանգության բաղադրիչ՝ պարզաբանելով այն ձևավորելու իրավական հիմքերը: Ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հիմնավորելու, որ ԸԱՊՔ իրավական հիմքը ԵՄ հիմնադիր պայմանագրերն են, դրանց մեջ փոփոխություններ կատարելու նպատակով ընդունված իրավական ակտերը, ինչպես նաև Եվրոպական անվտանգության ռազմավարության դրույթները: Միաժամանակ հիմնավորվում է, որ ԸԱՊՔ-ն ԵՄ անվտանգության բաղադրիչն է, քանի որ ԵՄ-ին օժտում է միջազգային անվտանգության համար պատասխանատու դերակատարի հատկանիշներով: Կարևորվում են ԵՄ-ի կողմից ԸԱՊՔ շրջանակներում իրականացվող առաքելությունները՝ որպես տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու ԵՄ առանցքային գործիքներ, և ուսումնասիրվում դրանք հիմնադրելու ընթացակարգերը: Արդյունքում սահմանվում է, որ գործնականում գոյություն ունի ԵՄ-ի կողմից ԸԱՊՔ շրջանակներում իրականացվող առաքելություններ հիմնադրելու երկու ընթացակարգ՝ ՄԱԿ-ի մանդատի հիման վրա և ընդունող պետության համաձայնությամբ: Բազմակողմանի քննությունը հանգեցնում է այն եզրահանգմանը,

որ այս երկու ընթացակարգերը տարբերվում են ինչպես հիմնադրման իրավական հիմքերով, այնպես էլ ԵՄ խորհրդի կողմից ԸԱՊՔ առաքելություն հիմնադրելու որոշում (համատեղ գործողություն) ընդունելուց հետո կողմերի միջև առաքելության կարգավիճակի վերաբերյալ համաձայնագիր կնքելու անհրաժեշտությամբ:

Երրորդ պարագրաֆում («Եվրոպական միության Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության մարմինների համակարգի կառուցվածքը և լիազորությունները») Լիսաբոնի պայմանագրով իրականացված կառուցվածքային փոփոխությունների լույսի ներքո անդրադարձ է կատարվում ԵՄ ԸԱԱՔ մարմինների համակարգի կառուցվածքին և լիազորությունների շրջանակին՝ հաշվի առնելով երևան եկած նոր դերակատարների իրավական կարգավիճակը: Ուսումնասիրության առանցքը մասնավորապես կազմում են ԵՄ այն ինստիտուտները և կառույցները, որոնց լիազորություններն ուղղակիորեն առնչվում են ԸԱԱՔ մշակմանը և իրականացմանը: Առանձնակի ուշադրություն է բևեռվում հատուկ մասնագիտացված դերակատարների իրավական կարգավիճակին, քանի որ նրանց գործառույթների շրջանակը, ի տարբերություն մյուսների, սահմանափակված է միայն ԸԱԱՔ ոլորտով: Հիմնավորվում է այն դրույթը, որ ԸԱԱՔ մարմինների համակարգն առանցքային նշանակություն ունի տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու գործում: ԸԱԱՔ մարմինների համակարգի՝ վերջին տասնամյակում իրականացված կառուցվածքային փոփոխությունների ուսումնասիրությամբ հիմնավորվում է, որ դրանք հետապնդել են մի նպատակ, այն է՝ լուծել ԸԱԱՔ մշակելու և իրականացնելու առկա խնդիրները: Ուսումնասիրվում են ԸԱԱՔ մարմինների համակարգում Լիսաբոնի պայմանագրով իրականացված կառուցվածքային փոփոխությունները, և կարևորվում է դրանց նշանակությունը ԸԱԱՔ արդյունավետությունը խթանելու, ինչպես նաև ԵՄ դերը միջազգային ապարեզում առավել ազդեցիկ դարձնելու համար: Լիսաբոնի պայմանագրով իրականացված փոփոխությունների մեկնաբանումը հիմնավորում է, որ դրանք կրում են համալիր բնույթ, քանի որ վերաբերում են ինչպես ԸԱԱՔ մարմինների լիազորություններին, այնպես էլ համակարգի ընդհանուր ձևափոխմանը:

Երկրորդ գլուխը («Եվրոպական միության և Հարավային Կովկասի պետությունների համագործակցության իրավական հիմքերը») բաղկացած է երկու պարագրաֆից և նվիրված է ԵՄ իրավասուբյեկտությունը, ԵՄ-ի կողմից կնքվող միջազգային համաձայնագրերը, ինչպես նաև Հարավային Կովկասի պետությունների հետ ԵՄ համագործակցության ձևաչափերը և դրանց իրավական հիմքերը պարզաբանելուն և ուսումնասիրելուն:

Առաջին պարագրաֆը («Եվրոպական միության կողմից կնքվող միջազգային համաձայնագրերը որպես համագործակցության իրավական հիմքեր») անդրադառնում է ԵՄ իրավասուբյեկտությանը և ԵՄ միջազգային իրավասուբյեկտության արդյունքում կնքվող միջազգային համաձայնագրերի տեսակներին՝ դիտարկելով դրանք որպես երրորդ պետությունների հետ ԵՄ համագործակցության ի-

րավական հիմքի առկայության դեպքում ԵՄ խորհուրդը ԸԱՊՔ նպատակներն իրականացնելու շրջանակներում ընդունում է առաքելություն հիմնադրելու համատեղ գործողություն: ԵՄ խորհրդի կողմից ԸԱՊՔ առաքելություն հիմնադրելու որոշումն (համատեղ գործողությունը) ինքնին իրավական հիմք է՝ սահմանելով առաքելության նպատակները, գործառույթները, կառուցվածքը և տևողությունը: Ընդունող պետության համաձայնությամբ ԸԱՊՔ առաքելություն հիմնադրելու դեպքում ԵՄ խորհրդի կողմից առաքելություն հիմնադրելու որոշում ընդունելուն հաջորդում է ԵՄ-ի և ընդունող պետության միջև առաքելության կարգավիճակի վերաբերյալ համաձայնագիր կնքելը, որը կարգավորում է առաքելություն իրականացնելու ընթացքում կողմերի իրավունքները և պարտականությունները:

3. ԵՄ ԸԱԱՔ մարմինների համակարգը կազմում են ԵՄ այն ինստիտուտները և կառույցները, որոնց լիազորություններն ուղղակիորեն առնչվում են ԸԱԱՔ մշակմանը և իրականացմանը: Ինչպես ԵՄ ցանկացած քաղաքականության ոլորտում, այնպես էլ ԸԱԱՔ դեպքում առանցքային դերակատարներ են ԵՄ անդամ պետությունները և ինստիտուտները: ԸԱԱՔ մարմինների համակարգում առանձնատուկ տեղ են զբաղեցնում հատուկ մասնագիտացված դերակատարները, որոնց գործառույթների շրջանակը, ի տարբերություն մյուսների, սահմանափակված է միայն ԸԱԱՔ ոլորտով: ԸԱԱՔ մշակման և իրականացման գործում՝ մասնավորապես տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու համատեքստում, հատկանշական է ԵՄ հատուկ ներկայացուցիչների ինստիտուտի և ԵՄ պատվիրակությունների դերը: ԸԱԱՔ ձևավորմանը զուգահեռ ԸԱԱՔ մարմինների համակարգը կրել է բազում կառուցվածքային փոփոխություններ, որոնք նպատակ են հետապնդել լուծել ԸԱԱՔ մշակման և իրականացման գործում առկա խնդիրները: Լիսաբոնի պայմանագիրն ուժի մեջ մտնելով ԸԱԱՔ մարմինների համակարգում կատարեց մի շարք առանցքային փոփոխություններ. մասնավորապես, երկարաձգվեց Եվրոպական խորհրդի նախագահի լիազորությունների ժամկետը՝ վեց ամսից դառնալով երկուս ու կես տարի (վերընտրվելու իրավունքով), ներմուծվեց Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով ԵՄ Բարձրագույն ներկայացուցչի պաշտոնը (վերջինս ի պաշտոնե նաև Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահներից է), ինչպես նաև ստեղծվեց Արտաքին գործողությունների եվրոպական ծառայությունը՝ նոր օժանդակ մարմին ԸԱԱՔ ոլորտում: Բացի այդ Լիսաբոնի պայմանագիրն ամրագրեց Եվրոպական անվտանգության գործակալության իրավական կարգավիճակը և ԵՄ Բարձրագույն ներկայացուցչին տվեց միանձնյա նախաձեռնության իրավունք ԵՄ հատուկ ներկայացուցիչներ նշանակելու հարցում: Այս փոփոխությունները ԵՄ-ին հնարավորություն ընձեռեցին առավել նեդաշնակ, համակարգված և ազդեցիկ հանդես գալու ինչպես միջազգային ասպարեզում, այնպես էլ տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու գործում:

4. Մինչ Լիսաբոնի պայմանագիրն ուժի մեջ մտնելը ԵՄ միայն դե ֆակտո էր օժտված իրավասուբյեկտությամբ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մակարդակում: ԵՄ եռասյուն համակարգի պայմաններում հենասյուները միջազգա-

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության առարկայի համակարգված ուսումնասիրության արդյունքը հետևյալ հիմնական եզրահանգումներն են.

1. ԵՄ ԸԱԱՔ իրավական հիմքը կազմում են ԵՄ հիմնադիր պայմանագրերը և դրանց մեջ փոփոխություններ կատարելու նպատակով ընդունված իրավական ակտերը: Եվրոպական արտաքին և անվտանգության քաղաքականության մոտ կես դար տևած ձևավորման գործընթացի հանգուցալուծումը 1992թ. ԵՄ-ի մասին պայմանագիրն էր, որն ամրագրեց ԸԱԱՔ-ի վերաբերյալ իրավական դրույթներ՝ սահմանելով ԸԱԱՔ նպատակները և դրանք իրականացնելու իրավական միջոցները: ԸԱԱՔ նպատակների շարքում ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի և Փարիզյան խարտիայի սկզբունքների համաձայն խաղաղության պահպանման և միջազգային անվտանգության ամրապնդման դրույթներն ամրագրելով՝ Մաաստրիխտի պայմանագիրը ԵՄ-ին հնարավորություն ընձեռեց իրականացնելու տարածաշրջանային անվտանգություն ապահովելու դերակատարին բնորոշ գործառույթներ: Լիսաբոնի պայմանագիրն իր հերթին ԸԱԱՔ նպատակներին հավելեց հակամարտությունները կանխելը. սա մեկ անգամ ևս ընդգծեց ԵՄ դերը տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու գործում: ԸԱԱՔ նպատակների իրականացման համար ԵՄ-ն ընդունում է որոշումներ, ուղենիշներ և սկզբունքներ, որոնք իրավական միջոցների մեկ ամբողջական համակարգ են: Լիսաբոնի պայմանագիրը վերաձևավորեց ԸԱԱՔ նպատակների իրականացման իրավական միջոցների համակարգը՝ դարձնելով այն առավել ընկալելի, արդյունավետ և համակարգված: Ներկայումս ԵՄ-ն ԸԱԱՔ նպատակներն իրականացնելու համար ընդունում է ԵՄ ռազմավարական հետաքրքրությունների և նպատակների, ընդհանուր դիրքորոշումների, համատեղ գործողությունների, ինչպես նաև ընդհանուր դիրքորոշումների և գործողությունների համար չափորոշիչներ սահմանելու որոշումներ:

2. ԸՊՊՔ իրավական հիմքը ԵՄ հիմնադիր պայմանագրերն են, դրանց մեջ փոփոխություններ կատարելու նպատակով ընդունված իրավական ակտերը, ինչպես նաև Եվրոպական անվտանգության ռազմավարության դրույթները: ԸՊՊՔ-ն ԵՄ անվտանգության բաղադրիչն է. այն վերջինիս օժտում է միջազգային անվտանգության համար պատասխանատու դերակատարի հատկանիշներով: ԵՄ-ի կողմից ԸՊՊՔ շրջանակներում իրականացվող առաքելությունները տարածաշրջանային խաղաղություն և կայունություն ապահովելու ԵՄ առանցքային գործիքներից են, որոնք գործնականում ապահովում են որոշակի տարածշրջաններում ԵՄ ուղղակի ներգրավվածությունը ռազմական և քաղաքացիական ունակությունների դրսևորման միջոցով: Գոյություն ունի ԵՄ-ի կողմից ԸՊՊՔ շրջանակներում իրականացվող առաքելությունների հիմնադրման երկու ընթացակարգ՝ ՄԱԿ-ի մանդատի հիման վրա և ընդունող պետության համաձայնությամբ: Առաջինի դեպքում իրավական հիմքը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած համապատասխան բանաձևն է, իսկ երկրորդի դեպքում՝ պետության կողմից ԵՄ-ին ուղարկված պաշտոնական հրավերը: Համապատասխան ի-

րավական հիմքեր: ԵՄ իրավասուբյեկտությունը դիտարկվում է երկու տեսանկյունից՝ մինչ Լիսաբոնի պայմանագիրն ընդունելը և այն ընդունելուց հետո: Մինչ Լիսաբոնի պայմանագիրն ընդունելը ԵՄ իրավասուբյեկտության խնդրին անդրադառնալը կարևորվում է հիմնականում նրանով, որ ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների համագործակցության իրավական հիմքերը Եվրոպական ընկերակցության միջազգային իրավունակության արդյունք են: Հիմնավորվում է, որ Լիսաբոնի պայմանագիրը, ԵՄ-ին օժտելով իրավաբանական անձի կարգավիճակով և փոխարինելով Եվրոպական ընկերակցությունն իրավաբանորեն նոր ԵՄ-ով, դե յուրե ամրագրում է ԵՄ իրավասուբյեկտությունը: Հիմնավորվում է նաև այն, որ Լիսաբոնի պայմանագրով ԵՄ իրավասուբյեկտության ամրագրումը և ցանկացած քաղաքականության ոլորտում միջազգային համաձայնագրեր կնքելու իրավասությունը անվերապահորեն կիրառելի են ԸԱԱՔ ոլորտում: Այս համատեքստում հետազոտման առարկա է դարձել այն հարցը, թե արդյոք պարտադիր են ԸԱԱՔ ոլորտում ԵՄ-ի կողմից կնքված միջազգային համաձայնագրերը ԵՄ ինստիտուտների և անդամ պետությունների համար: Հաստատվում է այն տեսակետը, որ ԵՄ անդամ պետությունների՝ արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտներում միջազգային համաձայնագրեր կնքելու և միակողմանի որոշումներ ընդունելու ինքնիշխան իրավունքը սահմանափակված է միայն ԵՄ-ի հանդեպ ունեցած իրավական պարտավորությունների շրջանակով: Լիսաբոնի պայմանագրով իրականացված փոփոխությունների լույսի ներքո ուսումնասիրվում են ԵՄ-ի կողմից կնքվող միջազգային համաձայնագրերի տեսակները՝ դիտարկելով դրանք որպես երրորդ պետությունների հետ համագործակցություն կառուցելու իրավական հիմք: Ուսումնասիրությունը հաստատվում է, որ ԵՄ-ի կողմից կնքվող միջազգային համաձայնագրերի տեսակներ են՝ առևտրային, գործընկերության և համագործակցության, փոխկապակցման (ասոցացման), անդամակցության, ինչպես նաև հատուկ համաձայնագրերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում հատուկ համաձայնագրեր կնքելու իրավական հիմքերին, գործնական իրագործմանը, ինչպես նաև ԵՄ-ի կողմից կնքվող միջազգային համաձայնագրերի դասակարգման մեջ դրանց գրված տեղին: Բացահայտվում է, որ հատուկ համաձայնագրերը գործնականում կարող են լինել փոխկապակցման համաձայնագրերի այլընտրանքային տարբերակ և կնքվել ԵՄ մի շարք հարևան պետությունների հետ:

Երկրորդ պարագրաֆում («Հարավային Կովկասի պետությունների հետ Եվրոպական միության համագործակցության ձևաչափերը և դրանց իրավական հիմքերը») ուսումնասիրվում են ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների համագործակցության ձևաչափերը և դրանց իրավական հիմքերը՝ նկատի առնելով հետագա համագործակցությունը զարգացնելու և խորացնելու հնարավորությունը: ԵՄ և երրորդ պետությունների համագործակցության ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում տարբերակելու համագործակցության ուղղակի և անուղղակի իրավական հիմքերը: Ուղղակի իրավական հիմք են ԵՄ-ի կողմից կնքվող և

երկկողմ հարաբերությունները կարգավորող միջազգային համաձայնագրերը, իսկ անուղղակի իրավական հիմք՝ ԵՄ իրավապայմանագրային համակարգի այն դրույթները, որոնք ԵՄ-ին օժտում են անհրաժեշտ համաձայնագրեր կնքելու իրավասությամբ: ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների համագործակցության ձևաչափերի պարզաբանմամբ հաստատվում է, որ կողմերի միջև մինչ օրս համագործակցության ուղղակի իրավական հիմք են դեռևս 1996թ. կնքված ԳՀՀ-ները: Որպես կողմերի միջև համագործակցության կարևորագույն ձևաչափեր բազմակողմանի քննվում են ԵՀՔ և Արևելյան գործընկերության (այսուհետև՝ ԱԳ) ձևավորման գործընթացը, իրավական հիմքերը և նպատակները: Առանձին-առանձին վերլուծվում են Հարավային Կովկասի պետությունների ԵՄ հետ համագործակցության շրջանակներում գրանցած առաջընթացը, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտները, ներկայիս մակարդակը: ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների հարաբերությունները կարգավորելու իրավական ձևաչափերին առնչվող վերջին զարգացումների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հիմնավորելու, որ մոտ ապագայում դրանք անվերապահորեն կհանգեցնեն կողմերի համագործակցության իրավական հիմքերի փոփոխության:

Երրորդ գլուխը («Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանցում Եվրոպական միության ներգրավվածության իրավական գնահատականը») բաղկացած է երկու պարագրաֆից և նվիրված է Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտների և Հարավային Կովկասի հակամարտությունները կարգավորելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերի վերլուծությանը և ուսումնասիրմանը:

Առաջին պարագրաֆում («Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտները») իրականացվում է Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտների համակողմանի ուսումնասիրություն: Իրավահամեմատական և հակամարտությունների ընթացքի փաստագրական վերլուծությամբ սահմանվում են հակամարտությունների բնույթը, անհատական հատկանիշները, նմանությունները և առանձնահատկությունները: Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտները քննելով՝ բացահայտվում են հակամարտությունների կողմերը և առարկան, ինչպես նաև Աբխազիայի, Հարավային Օսիայի և Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի փոփոխությունների հիմքերը և դրանց օրինականությունը: Հիմնավորվում և կարևորվում է այն, որ Հարավային Կովկասի հակամարտությունների իրավական ասպեկտներն առանցքային և գործնական կարևոր նշանակություն ունեն հակամարտություններն արդյունավետ կարգավորելու համար, արդիական են դրանց առնչվող ցանկացած հիմնահարցի ուսումնասիրության շրջանակներում, ինչպես նաև անառարկելիորեն պետք է հաշվի առնվեն հակամարտությունները կարգավորելու գործում ներգրավված միջազգային դերակատարների կողմից: Ուսումնասիրվում են Աբխազիայի, Հարավային Օսիայի և Լեռնային Ղարաբաղի ներկայիս միջազգային իրավական կարգավիճակի բնորոշ հատկանիշները՝ հիմնավորելով, որ միջազգային իրավական կարգավիճակը հակամարտությունները կարգավորելու առանցքային գործոն է: Պատմահիրավական և իրավաքաղաքական զուգահեռներով առանձնակի ուշադրություն է դարձվում Հարավային Կովկասի և Կոսովոյի հակամարտություններին՝ սահմանելով հակամարտությունների անհատական հատկանիշների նմանությունները և առանձնահատկությունները: Հաստատվում է, որ Հարավային Կովկասի հակամարտությունները, մասնավորապես իրավական ասպեկտների շրջանակով, լիովին համադրելի են Կոսովոյի հակամարտությանը, իսկ առկա տարբերությունները որոշիչ չեն կարող լինել Կոսովոյի նախադեպի հնարավոր կիրառման պարագայում:

Երկրորդ պարագրաֆը («Եվրոպական միության գործունեության իրավական հիմքերը Հարավային Կովկասի հակամարտությունները կարգավորելու գործում») նվիրված է Հարավային Կովկասի հակամարտությունները կարգավորելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերի պարզաբանմանը և ուսումնասիրմանը: Հետազոտվում են Հարավային Կովկասում ԵՄ՝ հակամարտությունները կարգավորելու միջոցները և նախաձեռնությունները, ինչպես նաև ԵՄ հնարավոր ներգրավվածության իրավական հիմնահարցերը: Վրաստանում հակամարտությունները կարգավորելու՝ ԵՄ գործունեության իրավական հիմքերը դիտարկվում են երկու փուլով՝ մինչ 2008թ. օգոստոսյան պատերազմը և դրանից հետո: Համալիր ուսումնասիրության են ենթարկվում Վրաստանում հակամարտությունները կարգավորելու՝ ԵՄ գործողությունները և նախաձեռնությունները՝ բացահայտելով դրանց իրավական հիմքերը և արդյունավետությունը: Հիմնավորվում է, որ ԵՄ-ն ուղղակիորեն ներգրավված է Վրաստանում առկա հակամարտությունները կարգավորելու գործում և միակ միջազգային դերակատարն է, որը միաժամանակ իրականացնում է հակամարտությունը կանխելու և կարգավորելու գործառույթներ: ԵՄ գործունեության առանցքը կազմում են Վրաստանում ԵՄ դիտորդական առաքելությունը, Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ Հատուկ ներկայացուցիչը, ինչպես նաև ժնևի քննարկումներում ԵՄ միջազգային միջնորդի կարգավիճակը: Ուսումնասիրվում են նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու՝ ԵՄ սահմանափակ գործունեության իրավական հիմքերը և ԵԱՀԿ Մինսկի խմբում ԵՄ անմիջական ներգրավվածության հիմնահարցը: Զուգահեռաբար անդրադարձ է կատարվում ԵՄ գործունեության հեռանկարներին և հնարավորություններին՝ ներկայացնելով մի շարք առաջարկներ ԵՄ հետագա ներգրավվածությունն ընդլայնելու ուղղությամբ: Նշվում է, որ ԵՄ գործնականում ուղղակիորեն ներգրավված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում, ԵՄ-ն չի իրականացնում հակամարտությունը կարգավորելուն ուղղված ծրագրեր և չի մասնակցում միջնորդական գործընթացին: ԵՄ-ն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը հիմնականում առնչվում է երկու գործիքի՝ ԵՀՔ և Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ Հատուկ ներկայացուցչի միջոցով: